


Շատերդ գիտեք, որ հոկտեմբերի համաժողովից քիչ անց, իմ սիրելի կինը, Ֆրենսիսը, ընկել էր և կոտրել ազդրը և վնասել ուսը: Երկու հաջող վիրահատություններից և մի քանի շաբաթ հիվանդանոցում անցկացնելուց հետո նա կարողացավ վերադառնալ տուն: Նա լավ է և գնում է դեպի լիարժեք ապաքինում: Նա կարողացավ անցած կիրակի մասնակցել Երիտասարդ Կանանց Գերագույն ժողովին և պատրաստվում է այս շաբաթ-կիրակի ներկա լինել մեկ-երկու նիստի: Վերջին պահին նա ասաց. «Ես այսօր գնում եմ»: Եվ նա այստեղ է: Նա ինձ հետ միասին արտահայտում է մեր խորին նրախտագիտությունը մեր Երկնային Հորը և ձեզ՝ ձեր աղոթքների և բարի մաղթանքների համար:

Այժմ, եղբայրներ և քույրեր, մենք եկել ենք այստեղ ուսուցում և ոգեշնչում ստանալու: Մենք ողջունում ենք նրանց, ովքեր նոր են Եկեղեցում: Կան, ովքեր մաքառում են խնդիրների, դժվարությունների, հուսահատության և կորուստների մեջ: Մենք սիրում ենք ձեզ և մենք աղոթում ենք ձեզ համար: Հաջորդ երկու օրերի ընթացքում ավետարանի տարբեր թեմաներով բազմաթիվ ելույթներ կհնչեն: Այն տղամարդիկ և կանայք, ովքեր կդիմեն ձեզ, խնդրել են երկնքի օգնությունը իրենց խոսքը ձեզ հղելու համար:

Իմ աղոթքն է, որ մենք կարողանանք լցվել Նրա Հոգով, լսելով և սովորելով: Դրա համար ես աղոթում եմ մեր Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Նախագահ Բոյդ Բ. Փաքեր
Տասներկու Առաքյալների Բվորումի Նախագահ

Քահանայության զորությունը

Քահանայությունը չունի սցենար, որ պետք է ունենա, և չի էլ ունենա, մինչև որ քահանայության զորությունը վճռակալորեն շիաստատովի ընտանիքներում ինչպես հարկն է:

Խոսքս ուղղում եմ ընտանիքների հայրերին և Եկեղեցու բոլոր ընտանիքներին:

Տարիներ առաջ Նախագահ Հարոլդ Բ. Լիի ղեկավարության ներքո մենք սկսեցինք վերափոխումների շարք: Այդ ժամանակ Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնն ասաց. «Այսօր, մենք բանակ ենք հավաքվել ամենատարբեր տեսակի մեղքերի, անառակության և չարիքի դեմ, որ երբևէ մեր աչքերը տեսնել են ... ճակատամարտի ծրագիրը, որով մենք կռվում ենք փրկելու մարդկանց հոգիները, մերը չէ: Այն [եկել է] Տիրոջ ոգեշնչման և հայտնության միջոցով»:¹

Համակարգման այդ տարիներին, Եկեղեցու ողջ գործող կազմը փոխվեց: Ընդհանուր ծրագիրը վերակազմվեց: Կազմակերպությունների նպատակները և միմյանց հետ հարաբերությունները վերասահմանվեցին: Այդ փոփոխությունների և վերակառուցման տարիների հիմնական բառը *քահանայությունն* էր:

Նախագահ Մոնտոնը նաև խոսեց Հին Կտակարանի հերոս՝ Գեդեոնի մասին: Գեդեոնը ընտրված էր ղեկավարելու Իսրայելի բանակները՝

հազարավոր ուժեղ մարտիկների: Բայց նրանցից նա ընտրեց միայն 300 հոգու:

Գեդեոնը իր նորակոչիկ զինվորներին հետաքրքիր ձևով ընտրեց: Երբ տղամարդիկ ջուր էին խմում աղբյուրից, շատերը «խմելու համար փորի վրա պառկում էին»: Նրանց նա ուշադրություն չդարձրեց: Մի քանիսը ձեռքով էին ջուրը վերցնում ու խմում, լիովին զգոն մնալով, նրանց էլ նա ընտրեց:²

Մենք ապրում ենք «պատերազմների, պատերազմների համբավների և զանազան տեղերում երկրաշարժերի»³ օրերում: Ըստ մարգարեության «ողջ երկիրը խառնաշփոթի մեջ [է]»,⁴ և «Սատանան դրսում է, երկրի վրա»:⁵ Նա ջանում է կործանել այն, ինչը բարի է և արդար:⁶ Նա Լյուցիֆերն է, որը դուրս էր գցվել Աստծո ներկայությունից:⁷ Այդ ամենին հակառակ, մենք շատ դրականորեն ենք տրամադրված ապագայի հանդեպ:

Գեդեոնի փոքր բանակը հաջողություն ունեցավ, որովհետև ինչպես կտակարանն է հաստատում. «Ամեն մարդ իր տեղը կանգնել էր»:⁸ Այս «ժամանակների լրության

տնտնությունը»⁹ բացվեց պատանի Չոզնֆ Սմիթին չոր և Որդու հայտնությամբ:¹⁰ Որից հետո, Սորոնի հրեշտակը Չոզնֆին ցույց տվեց, թե որտեղ են թաղված Սորոնի Գիրքը պարունակող թիթղները:¹¹ Չոզնֆին դրանք թարգմանելու գործություն տրվեց:¹²

Թարգմանության ժամանակ Չոզնֆն ու Օլիվեր Քատլերին կարդացին մկրտության մասին: Նրանք աղոթեցին իմանալու համար, թե ինչ պետք է անելին:¹³ Այդ ժամանակ նրանց հայտնվեց հրեշտակային սուրհանդակ Հովհաննես Մկրտիչը, որը նրանց շնորհեց Ահարոնյան Քահանայությունը, «որը կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղամալ մկրտության բանալիները»:¹⁴

Այնուհետև Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալները, ովքեր Տիրոջ ծառայության ժամանակ Նրա ամենամտերիմներն էին, հայտնվեցին և Չոզնֆին ու Օլիվերին շնորհեցին բարձրագույն քահանայություն¹⁵ կամ «Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու կարգի»:¹⁶ Այդ քահանայությունը, ինչպես սուրբ գրություններն են նշում, անվանվել է մեծ քահանայապետ Մելքիսեդեկի անունով, որին Աբրահամը տասանորդ էր վճարում:¹⁷

Այնուհետև դա դարձավ նրանց իշխանությունը: Քահանայության բանալիների միջոցով նրանք կարող էին օգտվել երկնային բոլոր գործություններից: Նրանց պատվիրվեց ավետարանը տանել բոլոր ազգերին:¹⁸

Երբևք հեշտ չի եղել Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելը: Հեշտ չէր Նրա ժամանակ, և հեշտ չէր նաև Եկեղեցու ստեղծման վաղ օրերին: Վաղ Սրբերը ենթարկվեցին անկարագրելի տառապանքների և ընդդիմության:

180 տարուց ավելի է, ինչ քահանայությունը վերականգնվել է: Մենք այժմ մոտ 14 միլիոն անդամներ ունենք: Դրա հետ մեկտեղ, մենք մի փոքր խումբ ենք երկրագնդի վրա ապրող միլիարդավոր մարդկանց հետ համեմատ: Սակայն մենք այն ենք, ինչ կանք, և մենք գիտենք այն, ինչ գիտենք, և մենք պետք է առաջ



գնանք և քարոզենք ավետարանը:

Սորոնի Գիրքը հստակորեն ասում է, որ մենք երբևք թվով չենք գերակշռի: Սակայն մենք քահանայություն գործությունն ունենք:¹⁹

Նեփի մարգարեն գրել է. «Եղավ այնպես, որ ես տեսա Աստծո Գառի եկեղեցին և դրա թիվը փոքր էր ... այնուամենայնիվ, ես տեսա, որ Գառի եկեղեցին, ովքեր Աստծո սրբերն էին, նույնպես ողջ երկրի երեսի վրա էին. և նրանց տիրապետությունները երկրի երեսի վրա փոքր էին»:²⁰

Նախագահ Չոզնֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Թեպետ կարող են ասել, ... որ մենք բավականին քիչ ենք ... աշխարհի հետ համեմատած, մենք կարող ենք համեմատվել այն թթխմորի հետ, որի մասին Փրկիչը խոսեց, որն ի վերջո կխմորվի [կամ կբարձրացնի] ողջ աշխարհը»:²¹

Մենք կարող ենք և իր ժամանակին անշուշտ ազդեցություն կունենանք ողջ մարդկության վրա: Հայտնի կդառնա, թե ով ենք մենք և ինչպիսին ենք մենք: Դա մի գուցե անհույս թվա, անչափ դժվար, սակայն ոչ միայն հնարավոր է, այլ նաև ակնհայտ է, որ մենք կհաղթենք սատանայի դեմ պատերազմում:

Մի քանի տարի առաջ ես մի ելույթ ունեցա, որի վերնագիրն էր՝ «Ինչ պետք է յուրաքանչյուր երեց իմանա. Քահանայության կառավարման սկզբունքների տարրական ձեռնարկ», ավելի ուշ, երբ այն պետք է հրատարակվեր, ես փոխեցի վերնագիրը՝ «Ինչ պետք է յուրաքանչյուր Երեց իմանա, և նաև՝ յուրաքանչյուր քույր»:²²

Ես ներառում եմ քույրերին, որով-

հետև անչափ կարևոր է, որ յուրաքանչյուրը հասկանա, թե ինչ է ակնկալվում եղբայրներից: Եթե մենք անուշադրության մատնենք մայրերին, դուստրերին և քույրերին, ովքեր մեծ ազդեցություն ունեն ամուսինների, հայրերի, որդիների և եղբայրների վրա, մենք չենք կարող առաջադիմել: Քահանայությունը մեծ գործություն կկորցնի, եթե քույրերն անտեսվեն:

Քահանայությունը իշխանություն է և գործություն, որը Աստված շնորհել է մարդուն երկրի վրա Իր համար գործելու:²³ Երբ քահանայության իշխանությունը պատշաճ ձևով գործածվի, քահանայություն կրողները կանեն այն, ինչ Նա կաներ, եթե ներկա գտնվեր:

Մենք լավ ձևով ենք բաշխել քահանայության *իշխանությունը*: Մենք ամենուր հաստատել ենք քահանայության իշխանությունը: Մենք երեցների քվորումներ և քահանայապետներ ունենք ավերոջ աշխարհում: Սակայն քահանայության *իշխանությունը* բաշխումը առաջ է անցել քահանայության *գրությունը* բաշխումից: Քահանայությունը չունի այն ուժը, որ պետք է ունենա, և չի էլ ունենա, մինչև որ քահանայության գործությունը վճռականորեն չհաստատվի ընտանիքներում՝ ինչպես հարկն է:

Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել է. «Ինչ համար պարզ է, որ Եկեղեցին *սյրընտրյալն է ջուրի*, և երբեք չի ունեցել, բացի առավելագույնս աջակցելու ընտանիքին, որպեսզի վերջինս կատարի *իշխանությունը* աստվածային առաքելությունը, ոչ թե որովհետև դա է նրկնքի կարգադրությունը, այլ որովհետև դա *ստննագործնական*

ավանդն է, որ մենք կարող ենք կատարել մեր նրիտասարդության համար, որն է՝ օգնել բարելավել կյանքի որակը Վերջին Օրերի Սրբերի տներում: Դրանք մեր բազմաթիվ ծրագրերի և կազմակերպչական ջանքերի պես կարևոր լինելու հետ մեկտեղ չպետք է դուրս մղեն տունը, այլ պետք է *աջակցեն* տանը»:²⁴

Նախագահ Չոզենֆ Ֆ. Սմիթն այսպես է արտահայտվել տանը քահանայության մասին: «Տանը նախագահող իշխանությունը միշտ տրվել է հորը, և բոլոր տնային գործերում և ընտանեկան հարցերում չկա դրանից ավելի մեծ իշխանություն: Նյս սկզբունքը լուսաբանելու համար, մեկ էպիզոդը բավարար կլինի: Երբեմն երեցները կանչվում են սպասավորելու ընտանիքի անդամներին: Այդ երեցների մեջ կարող են լինել ցցերի նախագահներ, առաքյալներ կամ անգամ Եկեղեցու առաջին նախագահության անդամներ: Նման դեպքերում ճիշտ չէ, որ հայրը իրեն հեռու պահի և ակնկալի, որ երեցները վարեն այդ կարևոր արարողության սպասավորումը: Հայրն այնտեղ է: Դա նրա իրավունքն է և նախագահելու պարտականությունը: Նա պետք է ընտրի մեկին, ով կցնի յուրը, և նրան, ով պետք է ասի աղոթքը, և նա պետք է հասկանա, որ Եկեղեցու նախագահող իշխանավորներին ներկայությունը իրեն չի գրկում իր տանը ավետարանի տվյալ օրհնության սպասավորումը վարելու իրավունքից: (Եթե հայրը բացակայում է, մայրը պետք է խնդրի ներկա գտնվող նախագահող իշխանավորին վարել այն:) Հայրը նախագահում է սեղանի մոտ, աղոթքի ժամանակ, և իր ընտանիքի կյանքի վերաբերյալ ընդհանուր ուղղություններ է տալիս ներկաներին»:²⁵

Վիետնամի պատերազմի ժամանակ մենք մի շարք կարևոր հանդիպումներ ունեցանք զինվորական ծառայության կանչված Եկեղեցու անդամների հետ: Չիկագոյում նման մի հավաքից հետո, ես կանգնեցի Նախագահ Հարոլդ Բ. Լիի կողքին, երբ մի հրաշալի նրիտասարդ Վերջին Օրերի Սուրբ ասաց Նախագահ Լիին, որ պետք է այցելի

տուն և ապա մեկնի Վիետնամ: Նա խնդրեց Նախագահ Լիին օրհնել իրեն:

Ի գարմանս ինձ Նախագահ Լին ասաց. «Քո հայրը պետք է քնդ օրհնություն տա»:

Հուսահատված տղան ասաց. «Հայրս օրհնություն տալ չգիտի»:

Նախագահ Լին պատասխանեց. «Գնա տուն, տղաս, և ասա հայրիկիդ, որ մեկնում ես պատերազմ և ուզում ես հայրական օրհնություն ստանալ իրենից: Եթե ձեր չգիտի, ասա, որ դու կնստես աթոռին, իսկ նա պետք է կանգնի քո ետևում, իր ձեռքերը դնի գլխիդ և ասի այն, ինչ միտքը կզա»:

Այդ նրիտասարդը վշտացած հեռացավ:

Երևույթի անց ես կրկին տեսա նրան: Ես չեմ հիշում որտեղ: Նա ինձ հիշեցրեց այդ դեպքի մասին և ասաց. «Ես արեցի այնպես, ինչպես ինձ ասվեց: Ես բացատրեցի հորս, որ կնստեմ աթոռին, իսկ ինքը պետք է ձեռքերը դնի գլխիս: Քահանայության գործությունը պատել էր մեզ: Դա ուժ ու պաշտպանություն էր կռվի այդ վտանգավոր ամիսներին»:

Մեկ այլ առիթով ես մի հեռավոր քաղաքում էի: Համաժողովից հետո, մենք կարգում և ձեռնադրում էինք ղեկավարներին: Ավարտելուց հետո, ցցի նախագահը հարցրեց.

«Կարո՞ղ ենք կարգել նրիտասարդ տղայի երեցի կոչման, որը մեկնում է միսիայի դաշտ»:

Պատասխանն իհարկե՝ այո էր: Երբ այդ նրիտասարդն առաջ եկավ, նա կանչեց երեք եղբայրների, որ մոտենան և կանգնեն իր ձեռնադրման ժամանակ:



Ես նույն շարքում տեսա այդ տղայի տիպիկ կրկնօրինակը և հարցրեցի. «Դա քո հա՞յրն է»:

Երիտասարդը պատասխանեց. «Այո»:

Ես ասացի. «Քո հայրը կկարգի քեզ»:

Սակայն նա ընդդիմացավ. «Բայց ես արդեն մեկ այլ եղբոր եմ խնդրել, որ կարգումն անի»:

Եվ ես ասացի. «Երիտասարդ, քո հայրը կկարգի քեզ, և կզա մի օր, որ դու շնորհակալ կլինես Տիրոջը այսօրվա համար»:

Սպա հայրը մոտեցավ:

Փառք Աստծուն նա երեց էր: Եթե չլինեիր էլ, շուտով կլինեիր: Չինվորական ծառայության մեջ դա անվանում են ռազմական պայմաններում պաշտոնի առաջխաղացում: Երբեմն նման բաներ կատարվում են Եկեղեցում:

Հայրը չգիտեր, թե ինչպես պետք է կարգեր տղային: Ես դրեցի ձեռքս նրա ուսին և նրան ուղղություն տվեցի կարգման ընթացքում: Երբ նա ավարտեց, նրիտասարդը երեց էր: Սպա մի հրաշալի բան տեղի ունեցավ: Լիովին փոխված հայր ու որդի գրկախառնվեցին: Ակնհայտ էր, որ դա նախկինում երբեք տեղի չէր ունեցել:

Արցունքներն աչքերին հայրն ասաց. «Ես չեմ կարգել իմ մյուս տղաներին»:

Պատկերացրեք, թե որքան շատ բան կատարվեց, քան եթե մեկ ուրիշը կարգեր նրան, թեկուզև Առաքյալ:

Մինչ քահանայությունը ողջ աշխարհում է, մենք կոչ ենք անում բոլոր երեցներին և քահանայատներին, բոլոր քահանայություն կրողներին, *իրենց տնորում կանգնել*՝ Գեղեթնի 300 հոգանոց փոքր, սակայն հզոր բանակի պես: Մենք այժմ պետք է Ամենագործի քահանայության գործությունը արթնացնենք յուրաքանչյուր երեցի և քահանայապետի, յուրաքանչյուր քվորումի և խմբի, յուրաքանչյուր տան հոր մեջ:

Տերն ասել է, որ «աշխարհի թույլ բաներն առաջ պիտի գան և ջարդեն գորավորներին և ուժեղներին»:²⁶

Մարգարե Նեփիին նաև խոսել է «Աստծո Գառի գործության [մասին], որ այն իջավ Գառի եկեղեցու սրբերի վրա և՛ Տիրոջ ուխտյալ ժողովրդի



վրա, որոնք ցրված էին ողջ երկրի նրեսի՜ն» և ասել է, որ «նրանք զինված էին արդարությամբ և Աստծո գործության մեծ փառքով»:²⁷

Մենք յուրաքանչյուրի կարիքն ունենք: Հոգնածները, հյուծվածները կամ ծույլերը, և նույնիսկ նրանք, ովքեր խրված են մեղքի մեջ, պետք է վերականգնվեն ապաշխարության և ներման շնորհիվ: Մեր քահանայության եղբայրներից շատերը ապրում են իրենց արտոնություններից և Տիրոջ ակնկալիքներից ցածր:

Մենք պետք է առաջ գնանք, վստահորեն կրելով քահանայության մեծ գործությունը: Դա ուժի և խրախուսման աղբյուր է, որտեղից կարող ենք իմանալ, թե ով ենք մենք, ինչ ունենք և ինչ պետք է անենք Ամենագործի գործում:

Տերն ասել է. «Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ. բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք»:²⁸

Քահանայության քվորումները պետք է հսկեն և ծառայություն մատուցեն այն տներում, որտեղ քահանայություն չկա: Այդ դեպքում, Եկեղեցու տներում օրհնություններ ստանալու պակասություն չի լինի:

Տարիներ առաջ, ընտանիքը հավաքվել էր ծեր փոքրամարմին դանիացի կնոջ անկողնու կողքին: Նրանց մեջ էր միջին տարիքի մուրված որդին: Վերջին մի քանի տարիներին նա ապրում էր տանը:

Նա արցունքների միջից աղերսում էր. «Մայրիկ, դու պետք է ապրես, դու չես կարող մահանալ»: Նա ասում էր. «Մայրիկ, դու չես կարող գնալ, ես չեմ թողնի որ դու գնաս»:

Փոքրամարմին կինը, նայելով իր որդուն, իր դանիական առզանությամբ ասաց. «Իսկ ո՞ր է քո գործությունը»:

Պողոսն ասել է.

«Առաքյալների և մարգարեների վրա շինուած [ենք]. որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է.

Որ նրանում բոլոր շինուածքը միասին հարմարուած աճում է, որ լինի սուրբ տաճար Տերով.

Որ նրանում դուք էլ նրա հետ շինվում եք Աստծո բնակարան Հոգով»:²⁹

Այն, որ Տիրոջ գործը կհաղթի, կասկածից վեր է: Մենք պետք է միավորենք մեր ջանքերը և ինքներս միավորվենք:

Քահանայության իշխանությունը մեզ հետ է: Ամեն ինչ բարեփոխելուց և կազմակերպելուց հետո, այժմ մեր պատասխանատվությունն է՝ ակտիվացնել *քահանայության գործունը* Եկեղեցում: Քահանայության մեջ *իշխանությունը* գալիս է կարգման միջոցով, քահանայության մեջ *գործունը* գալիս է ուխտերը պատվելով հավատարիմ և հնազանդ ապրելու շնորհիվ: Դա մեծանում է արդարակցությամբ քահանայությունը գործադրելու և օգտագործելու միջոցով:

Այժմ, հայրեր, ես ցանկանում եմ հիշեցնել ձեզ ձեր կոչման սուրբ

նպատակի մասին: Դուք ուղղակիորեն Տիրոջից ստացված քահանայության գործություն ունեք՝ պաշտպանելու համար ձեր տունը: Կլինեն ժամանակներ, երբ այդ գործությունը կլինի միակ բանը, որը որպես վահան կանգնած կլինի ձեր ընտանիքի և հակառակորդ բանասարկուրի միջև: Դուք հրահանգ կստանաք Տիրոջից Սուրբ Հոգու պարզեի միջոցով:

Հակառակորդը ակտիվորեն չի խափանում մեր Եկեղեցու հավաքները, գուցե միայն հազվադեպ: Ընդհանուր առմամբ, մենք ազատորեն հավաքվում ենք, ինչպես ցանկանում ենք, առանց ակնհայտ խանգարող հանգամանքների: Սակայն նա և նրա հետևորդները մշտապես գրոհում են տունն ու ընտանիքը:

Եկեղեցու ողջ գործունեության գերագույն նպատակն է, որ տղամարդը, կինը և նրանց երեխաները երջանիկ լինեն տանը, պաշտպանված ավետարանի սկզբունքներով և օրենքներով, ապահով կնքված հավիտենական քահանայության ուխտերով:

Ամեն օրենք, սկզբունք և գործություն, ամեն հավատամք, ամեն արարողություն և կարգում, ամեն ուխտ, ամեն քարոզ և հաղորդություն, ամեն խորհուրդ և ուղղում, կնքում, պաշտոնի կանչ և ազատում, ծառայություն, ունի մի գերագույն նպատակ՝ անհատի և ընտանիքի զարգացումը, քանզի Տերն ասել է. «Մա է իմ գործը և իմ

փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:³⁰ Այդպես էլ պետք է լինի:

Ես բերում եմ վկայություն քահանայության գործության մասին, որը տրված է Եկեղեցուն մեզ պաշտպանելու և առաջնորդելու համար: Եվ քանի որ մենք ունենք դա, մենք չենք վախենում ապագայից: Վախը հավատքի հակառակն է: Մենք առաջ ենք շարժվում, վստահ լինելով, որ Տերը հետևում է մեզ, հատկապես ընտանիքում: Մրա մասին ես վկայում եմ չիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, "Correlation Brings Blessings," *Relief Society Magazine*, Apr. 1967, 247.
2. Տես Դատավորաց Է.4-8:
3. Սորմոն 8.30; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.26; Չոզնիք Սմիթ – Մատթեոս Ա.23, 28:
4. Վարդապետություն և Ուխտեր 45.26; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 88.91:
5. Վարդապետություն և Ուխտեր 52.14:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 10.22-23:
7. Տես Հայտնություն ԺԲ.7-9; Վարդապետություն և Ուխտեր 29.36-37; 76.25-26:
8. Դատավորաց Է.21:
9. Վարդապետություն և Ուխտեր 112.30:
10. Չոզնիք Սմիթ – Պատմություն 1.17:
11. Տես Չոզնիք Սմիթ – Պատմություն 1.33-34, 59:
12. Սորմոնի Գրքի տիտղոսաթերթ, Վարդապետություն և Ուխտեր 135.3:
13. Տես Չոզնիք Սմիթ – Պատմություն 1.68-69:
14. Վարդապետություն և Ուխտեր 13.1:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 27.12-13:
16. Վարդապետություն և Ուխտեր 107.3:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.2-4, տես նաև Եբրայացիս Է.1-4; Ավան 13.15:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.58:
19. Տես 1 Նևիի 14.14:
20. 1 Նևիի 14.12:
21. Joseph Fielding Smith, in Conference Report, Oct. 1968, 123.
22. Տես Boyd K. Packer, "What Every Elder Should Know—and Every Sister as Well: A Primer on Principles of Priesthood Government," *Tambuli*, Nov. 1994, 15-24:
23. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 141; Joseph Smith Translation, Genesis 14:28-31, in Bible appendix:
24. Harold B. Lee, "Preparing Our Youth," *Ensign*, Mar. 1971, 3; emphasis added.
25. Joseph F. Smith, *Gospel Doctrine*, 5th ed. (1939), 287.
26. Վարդապետություն և Ուխտեր 1.19:
27. 1 Նևիի 14.14:
28. Վարդապետություն և Ուխտեր 82.10:
29. Եփեսացիս Բ.20-22:
30. Սովսնս 1.39:



Չուլի Բ. Բեք

Սփոփող Միության Գերագույն Նախագահ

«Եվ աղախիճների վրա էլ պիտի թափենք այն օրերը իմ հոգիս»

Մենք գիտենք, որ հաջողակ ենք, եթե ստյուռ ենք պղնձ, որ արժանանում և ստանում ենք Սուրբ Հոգին և իմանում, ինչպես հետևել Նրան:

Անցյալ տարի տարբեր երկրներում ես հանդիպել եմ հազարավոր Վերջին Օրերի Սուրբ կանանց: Դժվարությունների ցուցակը, որոնց այդ քույրերը դիմակայում են, երկար է և սթափեցնող: Այդ թվում են ընտանեկան դժվարությունները, տնտեսական փորձությունները, աղետները, վթարներն ու հիվանդությունները: Անհանգստությունը շատ է, իսկ խաղաղությունն ու ուրախությունը՝ ոչ բավարար: Չնայած հանրահայտ լրատվամիջոցների ուղերձները հակառակն են ասում, ոչ ոք այնքան հարուստ, գեղեցիկ կամ խելացի չէ՝ մահկանացու կյանքի դժվարություններից խույս տալու համար:

Քույրերի տված հարցերը լուրջ էին և խորաթափանց: Դրանք արտահայտում էին անհույս ապագա, անկատար ակնկալիքների ցավ, որոշ անորոշություն և նվաստացած արժանապատվություն: Դրանք նաև արտացոլում էին ճիշտ գործելու մեծ ցանկություն:

Իմ մեջ անհատթափարելի վկայություն է աճել Աստծո ղուտերի արժեքի մասին: Այնքան շատ բան է

կախված նրանցից: Քույրերին այցելելիս զգացել եմ, որ երբեք հավատքի և անձնական արդարակենցության ավելի մեծ կարիք չի եղել: Երբեք ամուր ընտանիքների և տների ավելի մեծ կարիք չի եղել: Երբեք կարիքավորներին օգնելը բավարար չի եղել: Ինչպես՞ կարելի է ավելացնել հավատքը, ամրապնդել ընտանիքը և օգնություն տրամադրել: Ինչպես՞ կարող է կինը մեր օրերում իր անձնական հարցերի պատասխանները գտնել և ամուր ու անսասան կանգնել հզոր դիմադրության և դժվարության դեմ:

ԱՆՃՆԱԿԱՆ հայտնություն

Լավ կինը գիտի, որ ինքը բավականաչափ եռանդ, ժամանակ կամ հնարավորություն չունի բոլոր մարդկանց համար հոգալու և անելու իր սրտից բխող ամեն արժանի բան: Շատ կանանց կյանքը հանգիստ չի ընթանում և ամեն օր, կարծես, պահանջվում են միլիոնավոր գործեր, որոնց մեծ մասը կարևոր է: Լավ կինը պետք է մշտապես դիմակայի հրապուրիչ և խաբուսիկ ուղերձներին, որոնք գալիս են